

ՎԱՐՂԱՆԻ ՇԻՐԻՄԸ

Աւարայրի հերոսին վերաբերեալ շատ մը աւանդութիւններ մինչեւ օրս ալ կենդանի են մեր ժողովուրդին սրտին մէջ: Մական քաղաքի (Իրան) Հայոց եկեղեցին կը կոչուի Ս. Վարդան. սակայն հոս պիտի յիշատակենք ուրիշ շատ կարեւոր կէտ մը, այն թէ՛ մինչեւ 1913 թուականը Խոյէն քիչ մը հեռու գոյութիւն ունէր մատուռ մը, որ կը համարուէր անմահ հերոսին գերեզմանը: Տակաւին շատեր այս մատուռին մասին յիշատակութիւններ ունին. արդարեւ աւելի հաւանական է որ Սուրբը հոս թաղուած ըլլայ, որովհետեւ գրեթէ Աւարայրին մօտակայքն է:

Հաւանաբար պատերազմէն ետք, երբ հայ բանակը ետ կը քաշուէր, Խոյի մօտակայքը թաղած ըլլան մարմինը Աւարայրի հերոսին, որուն վրայ աւելի ուշ շինուած է մատուռ մը:

Վիպագիր Րաֆֆին ալ անցնելով այդ կողմերէն, կ'աւանդէ իր տեղացի ուղեցոյցէն լսած խօսքերը, թէ Ս. Վարդան պատերազմելով անհաւատներու դէմ՝ նահապակուած է մօտակայքը եւ թաղուած այդ մատուռին մէջ:

Ուրիշ ոչ մէ յիշատակութիւն Րաֆֆիի կողմէ եւ վստահ ենք որ, եթէ հեղինակը քիչ մը աւելի հետաքրքրութեամբ մօտենար խնդրին, այսօր պիտի ունենայինք շատ մը դրական փաստեր, ու մատուռին ներքին կերպարանքի մասին որոշտեղեկութիւններ:



Խոյի դաշտի մէջ Ս. Վարդանանց մատուռը

Էփրիկեանի «Բնաշխարհիկ Բառարան»ին մէջ ալ կը գտնենք հետեւեալ տողերը.

«Խոյի դաշտին մէջ, բլուրի մը վրայ կայ հին մատուռ մը, շինուած քարէ, 32 ուրբ երկայն եւ 28՝ լայն: Տեղական բնակիչներու հին աւանդութիւնը այդ մատուռի գոյութիւնը կը կապէ Ս. Վարդան Մամիկոնեանի անձնաւորութեան հետ: Մատուռը նուիրուած է Ս. Վարդանին, որուն մէջ ամփոփուած է քաջն Վարդանի մարմինը, բայց Աւարայրի հեռաւորութիւնը տարակոյսի տակ կը ձգէ այս աւանդութեան ճշմարտութիւնը»:

Էփրիկեանի վերջին տեղերուն տարակարծութեան նկատմամբ, արդէն վերը յիշեցինք թէ պատերազմէն ետք՝ հաւանաբար Վարդանանց մարտիկներէն մաս մը ետ քաշուելով, իրենց ճամբուն վրայ Խոյի մօտակայքը թաղաց ըլլան Սեծ Զօրավարին մարմինը. ապա շարունակած են իրենց ճամբան:

Բախտով մեր ձեռքն անցած լուսանկար մը՝ քաշուած 1900ին՝ կը ներկայացնէ Սահակ Արք. Այվապեանին այցելութիւնը վերոյիշեալ մատուռին:

Թէոդիկի 1913 թուի «Ամէնուն Տարեցոյց»ին մէջ կը կարդանք հետեւեալ տողերը.

«Խոյէն մէկ ժամ հեռու, Տղմուտ գետին կամուրջին մօտ, բլուրին գագաթը խաչանշուած հողակոյտը կը ներկայացնէ հայ Աբիլէսին՝ Վարդան Մամիկոնեան քաջին գերեզմանը»:

Սոյն յիշատակութիւնը շատ կարեւոր է, քանի որ Ֆիլատելֆիա քաղաքէն Պրն. Տիգրան Պոյաճեան 1956ին գրուած մէկ նամակին մէջ կը նկարագրէ թէ 1915ին այցելած է մատուռը, որ տանիք չունէր, մէջտեղ կը գտնուէր կապագոյն մարմարիոն մը, որուն եւերքները ուխտաւորները կապարելով տարած են իբրեւ յիշատակ, պատերը՝ կիրով ծեփուած եւ ծածկուած՝ անունները:
Տարակուսական է այս նկարագրութիւնը, կամ գէթ տրուած թուականը, քանի որ արդէն 1913ին մատուռը կը յիշատակուի որպէս հողակոյտ մը. ուրեմն ի՞նչպէս Պրն. Պոյաճեան 1915ին պայն տեսած է տակաւին կանգուն վիճակի մէջ...